

Մենք՝ Վրաստանի ոչ գերիշխող էթնիկ և կրոնական համայնքները ներկայացնող ակտիվիստներս, արձագանքում ենք ԵՄ թեկնածուի կարգավիճակ ստանալու գործընթացին:

Մենք՝ տարբեր տարածաշրջաններից և տարբեր էթնիկ և կրոնական համայնքներից Համերաշխության պլատֆորմի շուրջ համախմբված ակտիվիստներս, կբարձրացնենք մեր ձայնը, որպեսզի Եվրոպական գործակալությունները, Վրաստանի կառավարությունը և շահագրգիռ կողմերը կարողանան լսել և հաշվի առնել Վրաստանի եվրոպական ապագայի վերաբերյալ մեր տեսլականներն ու տեսակետները:

Ուզում ենք պարզ և ընդգծված նշել, որ եվրոպական վեկտորը և Վրաստանի ապագան քաղաքացիական հավասարության, ազգամիջյան համերաշխության և ներառական հասարակության կառուցման հիմնական երաշխավորներն են: Այսօր, ինչպես երբեք, Վրաստանում փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը և մեր եվրոպական ընտրությունը կախված են միմյանցից: Մենք հավատում ենք, որ մեզ համար եվրոպական ինտեգրումը նշանակում է համակարգային անարդարություններին վերջ դնելու, կառուցվածքային խտրականության վերացման և մեկուսացման հաղթահարում:

ԵՄ-ին անդամակցությունն ու աջակցությունը կարևոր նախապայման են մեր երկրի սուվերեն շահերի պաշտպանության և անվտանգության համար, և հատկապես Ուկրաինայում դաժան պատերազմի ֆոնին Ռուսաստանի կողմից բխող սպառնալիքների մասշտաբների համաձայն, որքան կարևոր է Վրաստանի համար գործընկերներից անվտանգության երաշխիքներ ստանալը:

Մեզ համար ԵՄ-ն ոչ միայն երկնաքերերի, հարուստ առևտրի կենտրոնների և շլացուցիչ քաղաքների վայր է, այլ մեր պատկերացմամբ ԵՄ-ն քաղաքական տարածք է, որտեղ բարձր լսվում են ոչ գերիշխող խմբերի ձայները, քաղաքական համակարգերն ուղղված են իրավունքների արդար բաշխմանը, համերաշխային հասարակություն կառուցման, գործում է մասնակցային ինքնակառավարում, արժանապատիվ նվազագույն աշխատավարձն ու աշխատանքային պայմանները, հանրային ծառայություններից, ծրագրերից և առողջապահությունից օգտվելը երաշխավորված են բոլորի համար, նույնիսկ երբ քաղաքացին չի տիրապետում պետական լեզվին:

Մենք ցանկանում ենք ԵՄ-ն ոչ միայն այն պատճառով, որ եվրոպական տնտեսությունն ուժեղ է, այլ նաև այն պատճառով, որ ԵՄ ամենաաղքատ, առավել մարզինալացված և ճնշված խմբերը հասարակության և ինստիտուտների ուշադրության կենտրոնում են, և բոլոր շահագրգիռ կողմերը աշխատում են նրանց աջակցելու համար:

Ըստ այդմ, մենք կոչ ենք անում Եվրոպայի խորհրդին և այլ իստիտուտների որոշումներ կայացման գործընթացում հաշվի առնել մեր վրաստանում բնակվող ոչ գերիշխող խմբերի ձայներն ու կարիքները և ընդունել որոշում, որը կպաշտպանի բոլոր մարդկանց:

Մենք տեսնում ենք, որ կառավարության ջանքերը՝ աջակցելու և իրականացնելու ասոցացման համաձայնագրով ստանձնած պարտավորությունները, թույլ են: Խնդրահարույց է նաև քաղաքական հռետորաբանությունը եվրոպական կառույցների և գործընկերների նկատմամբ:

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ մեր հասարակությունը տարիների ընթացքում ցույց է տվել իր հստակ եվրոպական կողմնորոշումը և ժողովրդավարական հասարակություն կառուցելու ցանկությունը:

Մենք ցանկանում ենք ընդգծել, որ Վրաստանի ժողովուրդը, մեր եվրոպացի ընկերները, համայնքի ղեկավարները և իրավապաշտպանները, որոնք աշխատում են ոչ գերիշխող էթնիկ խմբերի իրավունքների համար, զգալի առաջընթաց են գրանցել: Միևնույն ժամանակ, մեզ հիմա ամենից շատ է պետք Եվրամիության թեկնածությունը, որպեսզի չվնասեն այն աշխատանքին, որը մենք բոլորս միասին անում էինք:

Միևնույն ժամանակ, մենք հավատում ենք, որ թեկնածուի կարգավիճակից մինչև ԵՄ լիիրավ անդամակցություն կունենանք էլ ավելի մեծ և բարդ ճանապարհ, և այս գործընթացում մենք՝ վրաստանում բնակվող ոչ գերիշխող խմբերս, պատրաստ ենք անմիջականորեն աշխատել ԵՄ-ի համապատասխան իստիտուտների, պետական մարմիններ և Վրաստանի քաղաքացիներ հետ մեկտեղ կառուցել երկիր, որտեղ պահպանվում և հարգվում են համընդհանուր ճանաչված արժեքներն ու սկզբունքները՝ հավասարությունը, սոցիալական արդարությունը և արժանապատվությունը:

Համերաշխության պլատֆորման միավորում է ակտիվիստների տարբեր շրջաններից, այդ թվում՝ Աջարիայից, Մամգիև-Ջավախեթից, Քվեմո Քարթլիից, Պանկիսից, Թբիլիսիից և նրա նպատակ է համերաշխություն ստեղծել ոչ գերիշխող էթնիկ և կրոնական խմբերի միջև և նրանց կարիքները, մտահոգությունները և տեսլականները դնել քաղաքական օրակարգում: